

ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Հայոց դրամատիկական ընկերութեան խմբի ներկայացումները Թիֆլիսում

Թիֆլիսի հայ հասարակութեան կեանքում այս ներկայացումները կազմում են սակաւաթիւ լուսաւոր երեւոյթներից մէկը։ Շնորհիւ ընկերութեան վարչութեան և թատրոնական կոմիտէի եռանդին, բարեխզճութեանը և գիտակցական վերաբերմունքին, ներկայացումների գործը առ այժմ՝ յուսալու իրաւունք է տալիս, եթէ ի հարկէ հայ հասարակութեան սառցէ անտարբերութիւնը չը գայ իր ծլի մէջ խեղդելու այնքան գեղցիկ յոյը։

Խումբն այս տարուայ համար կազմուած է հայ բնիքի լուսագոյն ոյժերից, որոնց մէջ աչքի են ընկնում հայ հասարակութեան վաղածանօթ և սիրելի անուններ։

Անցեալ սեպտեմբերի կէսից բացուած է թատրոնական սեղոնը և մինչեւ այժմ տեղի են ունեցել արդէն ութ ներկայացումներ, խաղացել են՝ «Կատիւ», Զուղերմանի «Բարեկամներ», «Կրիչչինսկու հարսանիքը» Սուխօսօ-Կորիլինայի, «Վանիչ շինի զաւակները» Նայդենօվի (երկու անգամ), «Արքայ Լիր» Շեքսպիրի, «Ունիքը իրաւունքը» Շիրվանզագէի և «Անմեղ մեղաւորներ» Օստրօվսկու։

Այս անգամ մենք կանգ կ'առնենք վերջին չորսի վրայ, որոնք մի քանի տեսակէտով աւելի հետաքրքրութիւն են ներկայացնում թէ գերակատարների խաղը բնորոշելու և թէ շաշափած հասարակական—բարոյական զաղափարների կարեւորութեան համար։ «Վանիչինի զաւակները» այն գրական դործերից մէկն է, որ անյայտութեան մէջ ծածկուած մի հեղինակի անուն կարող է մէկէն յայտնի գարձնել նայդենօվ իր

պիեսայի համար իրբեւ նկութ ընտրել է կմնական ամենասովորական, ամենարանալ երեւոյթների մի շրջան, հարուստ վաճառականի ընտանեկան կեանքն իր առօրեայ արտայցատութիւններով և հոգեբանական մանրակրկիտ և հմուտ վերլուծութեամբ, այդ արտաքուստ սովորական, աննշան կրեւոյթների տակ բացել է կեանքի խոշոր վէրքեր, խորին զրամատիզմ:

Դուք տեսնում եք հարուստ վաճառական Վանիւշինին, վաթսուն տարեկան մի ծերունի, որ քառասուն տարի աշխատել է, տքնել է և կոպէկի կոպէկի հետ արիւնով է կապելք իր զաւակների ապագայի, նրանց երջանկութեան համար: Եւ նրա զաւակները բազմաթիւ են, ահա մեծ որդին, որ գիմնազիան աւարտել է և օգնում է հօրը խանութում, ահա նրանից փոքրը, որ դեռ սովորում է, երկու աղջիկները, որոնք ամուսնացել են, երկու ուրիշները, որոնք գեռ սովորում են: Ինքն իր ինոչ հետ ապրում է տան առաջին յարկում, իսկ երեխաները վերեւում՝ դաստիարակչուհիների հսկողութեան ներքոյ: Երկար ժամանակ նրան թւում է, թէ ամեն բան լաւ է ընթանում, թէ ինքը երջանիկ է, գործ ունի, հարստութիւն ունի, լայն կերպով ծախսում է իր զաւակների կրթութեան համար, չէ որ նրանք բոլորն ել զանազան դպրոցներում են, չէ որ նրանց վրայ հսկում են զաստիարակներն ու զաստիարակչուհիներն, ուրիշ էլ ինչ: Ամեն բան լաւ է. նա իր պարագը կատարած է համարում դէպի իր զաւակները, սովորում են նրանք արդեօք, ինչ են անում դաստիարակները, ծառաները. ինչ է կատարեւում վերեւում, երեխաների հետ, այդ նա չը գիտէ, նա չի էլ ուզում իմանալ, բաւական չէ միթէ, որ նա նրանց բոլոր պէտքերը հոգում է, որ բոլորին էլ ուսում է տալիս, մասածն ինքն իրան կը լինի:

Եւ մնացածն ինք իրան է լինում: Մեծ որդին հնչոյ հայրական յարկի տակ ապրում է իր ազգականունու հետ, փոքր որդին գիշերները փախչում է ով գիտէ ուր և անց է կացնում կասկածելի կանանց հետ, ծախսելով տնից գողացած փողերը. մի աղջիկը խաբում է և իր անմեղութիւնը զոհ է բերում մի խարդախ շարլատանի, որ միենոյն ժամանակ մեծ քրոջ ամուսինն է. երկու փոքր աղջիկները առաւօտից երեկոյ ականջները զըռների ձեղքերին դրած աշխատում են իմանալ, թէ ինչ են ասում, ինչ են անում իրանցից մեծերը: Եւ ամբողջ քաղաքում յայտնի, պատուաւոր ու բարեկիրթ համարուած Վանիւշինի ընտանիքը ներգուստ ներկայանում է, որպէս զանգրենով բռնուած մի մարմին, որ օր աւուր քայլայում, նեխուում է և դիմում է դէպի անխուսափելի կատաստրօֆը:

Եւ մի օր Վանիւշինն իմանում է, թէ ինչ սարսափելի

շաւ է ծածկուած իր բարեկիրթ, պատւաւոր համարուած ընտանիքում Երկրորդ աղջիկը մի շարթուայ ամուսնացած՝ յետ է զալիս հօր տուն, որովհետեւ ամուսինը նրան ծեծում է և փող է պահանջում մի մութ խայտառակութիւն ծածկելու համար Յետոյ յայտնում է, որ իր տանն ապաստանած որբ աղջականունին զո՞ն է իր մնած որդու գոփանքին, փոքր որդին զուրս է վինդուում զիմնազիայից, վատ վարքի համար և այլն և այլն:

Հարուած հարուածի յմտեւից ընկնում են ծեր Վանիւշինի զլիին, նա բաց աչքերով տեսնում է իր օջախի և իր ոտքերի տակ բացուած նիւթական և բարոյական անդունդը, տեսնում է այն, ինչ այնքան ժամանակ թագնուած էր իրանից նորհիւ իր եսասէր, նիւթապաշտ անհոգութեան, այս ու այն կողմն է ընկնում, ձար, հնար է փնտուում ընտանիքի բարոյական չէնքը փրկելու, որ ձարձատում է ամեն կողմից, Խորհրդի է կանչում իր միամիտ, պարզ կնոջը, ի զուր, ցնցումն այնքան զօրեղ է, կատարուածներն այնքան անսպասելի, որ նա իսպառ կորցնում է գլուխը, չչկում է յուսահատում, և նետում է նոյն անդունդի, նոյն ընդհանուր կտտասարօֆի մէջ վերջ տաւլով իր կեանքին:

Այս պիեսայի նիւթը թէեւ վերցրած է ոռւս կեանքից, գործող աձինք կրում են ոռւս անուններ, բայց համարձակ կարելի է ասել, որ տաղանդաւոր հեղինակը իր այս գործով բացել է մի ցաւ, որ ընդհանուր է նոյն պայմաններում ապրող բոլոր ազգերի ընտանիքների համար Սա մի անողորմ ապտակ է բոլոր նրանց, որոնք փողի ամնակարողութեան կուլտի քրներ են, որոնք կարծում են թէ կեանքի մէջ անգամ բարոյականութիւնը կատարեալ է, երբ նա բազմում է ոսկու զանի վրայ, թէ զաւակների գաստիարակութիւնը վարձով զնուելիք ապրանք է շուկայում և կարելի է հնչաւն զրամով ձեռք բերել Սա մի յախուռն ու կակծեցուցիչ մեղադրական ակտ է ուղղուած կեանքի միակողմանիութեան, չոր ոիւթապաշտութեան դէմ, մի զառն զաս բոլոր նրանց, որոնք յիմարաբար կամ զիտալցօրէն աշխատում են իդէալը, բարոյականութիւնը՝ կեանքին գեղեցկութիւն, փայլ, տուող վսեմ հոգեկան պահանջները՝ ստորագասել իրանց զարշելի ոիւթապաշտ էգոիզմին և իրանց ցեխոս ոտների տակ տրուբել այն ամենը ինչ մարմելի, ստամբօսի համար անպէտք է:

Կեանքն իր ամբողջութեամբ մի վսեմ ներդաշնակութիւն է, ուր բնական օրէնքների տրամաբանութիւնը որպէս զիրագոյն իշխող՝ մարդկային նիւթական և բարոյական պահանջներին համապատասխան տեղ ու կարգ է սահմանել, Անհնարին է անպատիժ կերպով խախտել այդ ներդաշնակութիւնը, անհնարին է

աղաւաղել, խեղաթիւրել բնութիւնը առանց որ այդ յանցաւոր փորձի հակածարուածը նոյն փորձի հեղինակի զլիսին ընկնէր, Վանիւշիններով լիքն է և մեր կեանքը, ներքուստ նեխուած, քայլայուած, իսկ արտաքուստ փայլուն ընտանիքների նմուշներով լիքն է և մեր միջավայրը ու իրականութիւնը, վատ հասկացուած և այլանդակուած քաղաքակրթութիւնը միացած բիրդ ասիականութեան և մի շարք այլ բացասական փակտորների հետ կրծում է շատ ընտանիքների գոյութեան հիմքերը, հիւծախտի պէս քամում է նրանց ներսը, կրքերն ու ախտերը եռում են արտաքին վայելչութեան քօզի տակ, բայց գրամը, անունը իրանց արտաքին փայլի շողերով շարունակում են ոսկեզօծել այդ բոլորը: Շրջապատը խօսում է փափսուկով, զլուխը թափի է տալիս խորհրդաւոր ձեւով, բայց շարունակում է զլիսարկ հանել և մինչեւ զետին խոնարհուել, երբ անցնում է ոսկու ոյժը ներկայացնող այդ ցեխուուած կուոքը, որի տունը հրէշաւոր երեւոյթներով լի մի գժոխք է ներկայացնուած: Փարիսոցի սի հասարակութեան մէջ, ուր բարոյական շանտաժը գերիշխող է, ուր մէջքերը ճկուն են և ժպիտներն աժան՝ ընտանիք, ընտանիքներան սրբութիւն, օջախի պատիւ միշտ ֆիկցիաներ են, դատարկ հընչիւններ, որոնք շնուած են ծածկելու համար բարոյական հրէշաւոր այլանդակութիւններ, հասարակական կազմը քայլայող, կրծուող ցաւեր:

Եւ այս գեղեցիկ պիեսան ունեցաւ իր յաջող գերակատարները: Ես առանձին սիրով եմ կանգ առնում պ. Պետրոսեանի (Վանիւշին հայրը) խաղի վրայ: Խոյս եմ տալիս արդէն խիստ բանալ զարձած ֆրազներից, որոնցով պիտի ասէի թէ պ. Պետրոսեան սկզբից մինչեւ վերջը լաւ տարաւ խազը, իր գերումն էր, թէ նա լաւ ուսումնասիրել էր իր դերը: Ըստ իս դերը մենակ գրքի մէջ կամ ուրիշի խաղերը դիտելով ուսումնասիրել աւկարելի է: Որեւ է զեր կեանքի մի կտորն է և նրա նմուշներով, նրա անալոգիաներով լիքն է յայտնի իրականութիւնը: Եւ այն պատկերացնելու, կենդանի, կատարեալ դարձնելու համար լաւ զերասանն ստիպուած է ինդիւկցիայով սինտեղ կազմել կեանքի տուած բազմաթիւ հոգերանական փաստերից և նրա արդիւնքը գնել բեմի վրայ հասարակութեան առաջ: Պ. Պետրոսեանի խաղը հէնց դրանով էր հետաքրքիր, ինձ թւում է որ նա իր կեանքի ճանապարհին տեսել է և ուսումնասիրել է բազմաթիւ ծեր, դժբաղս հայրեր, աւելին կասեմ ապրել է նրանց հոգին այրող ցաւերով: Այլապէս ինչպէս բայցատել նրա այն սիրուն ժեսար, որով ծանր մասհոգութեան և ներքին կոկծի վայրկեաններին նա քաշշում է իր ծեր ալիքները մեղմով, ա-

սես Հակլած խազում է Նրանց հետ Արքան գեղեցիկ, որքան նշանակալից է Նրան զիսի օրօրելը և Նրանից յետոյ մի կետին յառած Նրա մոայլ հայեացքը: Նրա չարժումներից իւրաքանչիւրը հոգեկան ներքին աշխարհի մի պերճախօս արտայայտութիւն էր: Մի քանի տեղ պ. Պետրոսեան տուեց իսկապէս պատկրներ, որոնք կապրեն յիշողութեան մէջ, ինչպէս բնութեան մի գեղեցիկ տեսարան, որ մում է տպաւորուած մեր զինում և խազում է մեր երեւկայութեան հետ Այդ պատկերներից ամենացնցողը այն տեսարանն է, ուր նա լսում է փոքր որդու խոստովանութիւնը և գրկում ու համբարում է Նրան: Քանի աշխեր թացացան հասարակութեան մէջ, այդ վայրկենին պ. Պետրոսեան մի լաւ վարպետ էր, որ իր ձեռքի մէջ բռնել էր այնքան սրտեր և քամում էր, քամում իր ուզածի պէս ինչպէս զոյգ ափի մէջ փոքրիկ թրպուասող թռչուն պահող մի չարաձնի մանուկ:

Պ. Արէլեան Վանիւշինի մեծ որդու համեմատարար երկրորդական և բնաւորութեան տեսակէտից չ'ամբողջացրած մի փոքր անորոշ գերում իրան յատուկ տաղանդով կարողացաւ հասարակութեանը ներկայացնել մի յաջող տիպ հարուստ ջանիլ եօն vivant-ի, որ աշխատանքի, կրթիչ նուիրական բովից չի անցել, որ սակայն լաւ գիտէ շապլել ուրիշների վաստակն իր եսասէր պէտքերի համար Արքան մի զեր լաւ կաղապարուած չէ, որքան նա իրբեւ հոգերանական ամբողջութիւն լաւ չետուած սահմաններ չունի, այնքան աւելի զժուար է գերակատարի խնդիրը: Մի փոքր անփորձ, կամ պակաս չնորհալի գերասանն այդ գէպքում զլուխը կորցնում է, ասես խճճում է, հոգերանական ցանցառ հիւսուածքի մէջ: Դերասանի իսկական տաղանդը, Նրա խազի ոյժը հէնց Նրանում է կայանում, որ նա կարողանում է շատ անգամ ուզգել հեղինակին, Նրա տուած պատկերի վրայ իր վրձինը մի քանի անգամ տանել, բերել, այսպէս ասած շարունակել, լրացնել Նրա գործը ծիշտ մի այդպիսի լրացուցիչ և հմուտ աշխատանք կատարեց պ. Արէլեան, մի քիչ յեղյեղած ու ձգձուած զերից նա կարողացաւ ստեղծել մի կենդանի տիպ, և գրական ստեղծագործութեան ֆիկցիան հաւանականութեան և իրականութեան ծցրիտ պատկերն ստացաւ: Պ. Մամիկոնեան Վանիւշինի կրտսեր որդու զիմնազիստ Ալեօշայի գերում՝ հոգեկան յոյզերի նուրբ գիտողութիւն ցոյց տուեց, ինչպէս և անպայման արտիստական չնորք: Ամենից աւելի Նրա խազի մէջ մարդուս գրաւում են այդ անարուեստ, չը ձնշուած, ազատ չարժումները: Նրա գէմքը երբէք պարապ չէ, նա խօսի թէ չը խօսի, մի բան անի կամ չանի:

այդ միւսնոյն է, պ. Մամիկոնեանի դէմքը շարունակ խօսում է, երբ նա բեմի վրայ է, նրա գրաւած անկիւնը միշտ հետաքրքիր է, ժամանակից առաջ հասունացած, չը հասկացուած և իր բաղդին ձգուած այդ գիմնազիստը չնորհիւ պ. Մամիկոնեանի գրաւիչ էր ինչպէս իր վշտի, նոյնպէս և իր խենթութիւնների ժամանակի.

Երկու անգամ նրա զօրեղ միմիկան իր դէմքից կախոց բոլոր հայեացքները, նախ երբ նա յափշտակուած դիտում էր իր սրտի ընտրածի պատկերը, և երկրորդ՝ երբ պատրաստում էր մօր թագցրած փողերը գողանալ, Բոլոր նշաններից երեւում է, որ պ. Մամիկոնեան պէտք է կարողանայ հայ բեմի վրայ աչքի ընկնող տեղ գրաւել, եթէ (և այդ «եթէն փոքրերից չէ), եթէ աւելի մշակի իր հայերէնը, մանաւանդ արտասանութիւնը, երբեմն հնչիւններն ու շեշտերն այնքան խորթ են, որ մարդ կարծում է լաել հայերէն խօսող մի օտարականիւ Մնացած դերակատարները համարեա առանց բացառութեան լաւ տարան իրանց գերերը մինչեւ վերջը Բայց անկարելի է մի քանի խօսք չասել օր. Խիթարեանի մասին, որ կատարում էր Վանիշինի փոքր աղջիկներից մէկի գերը. Օրիորդն այդ օրը բեմի վրայ մի կենդանի, կայտառ թոշնակ էր, և նրա տիրութիւնն ու զնծութիւնն էլ թոշնակի էր, վարակիչ ու գրաւիչ. Երրորդ գործողութեան վերջում նա էր, որ իր վերին աստիճանի անկեղծ յուզմունքով, իր բնական ու յախուռն վշտի և զայրոյթի արցունքով առաջ բերեց այն խորապէս ազդող դրամատիզմով լի տեսարանը. Մնացածները շարունակեցին նրա գեղեցիկ կերպով սկսածք:

Վանիշինի գաւակների ներկայացումից երկու անգամին էլ հասարակութիւնը գոհ հեռացաւ, չափազանց չի լինի ներթագրել, որ նրա երրորդ ներկայացումը դարձեալ կը գրաւի հասարակութեան մի ստուար թիւ:

Ի՞նչ ասենք, «Արքայ Լիրի» մասին, որի ներկայացումը տեղի ունեցաւ Հոկտեմբերի 4-ին. Այն՝ որ Շեքսպիրի ստեղծագործութիւնները մի փոքր անհամապատասխան բեմի վրայ անհամապատասխան ոյժերով ներկայացնելու բազմաթիւ և այն խոչոր գժուարութիւններ կան. Զափաւոր ոյժերով, թէկուզ միայն մի քանի թերութիւններով անկարելի է պատկերացնել այն հանճարեղ խօլակիան ստեղծագործութիւնները, որոնց մէջ համարեա գերմարդկային բան կայ. Տէս իրաւացի կերպով առում է, որ «Շեքսպիրը նկարագրում է երկու արձան և թողնում է ընթերցողին երեւկայել մի ամբողջ սիտէ»: Իսկ այդ

սիտէն պատկերացնելու համար մի, երկու դերասանի յաջող խաղը բաւական չէ, անհրաժեշտ է բոլորի, առանց բացառութեան բոլորի միահամուռ և կենդանի աջակցութիւնը, այլապէս մէկի երկու թէկուզ լաւ խաղը կը մնայ առանց որոշ տպաւորութեան, ինչպէս մի նկար առանց շրջանակի Պ. Գետրոսսեան Արքայ Լիրի գերում մի բաւականին լաւ նկար էր, բայց համարեա առանց շրջանակի. լաւ մտածուած և գեղեցիկ էր մանաւանդ նրա արտաքինը Տեղ-տեղ նա իրօք մի ծեր ու վշտացած արքայ էր, չատ անգամ նրա խաղը բարձրանում էր մինչեւ յաջողութեան աստիճանը, բայց այստեղ մնալու համար ինչքան շատ բան էր հարկաւոր, որ հայ բեմը տու այժմ տալ չի կարող Պ. Արէլեան չատ լաւ կատարեց խօնդ Տոմի գերը, որ մեր կարծիքով նրա տաղանդին համապատասխան գերերից մէկն է Այդ երեկոյ ամենացնցող աեսարաններից մէկը եղաւ ցրտից գողգոզայող կիսամերկ, կիսախելազար այն ողորմնին, որ մեղ տուեց պ. Արէլեան, Շէքսպիրի պիեսաների ներկայացման դժուարութիւնները միայն մեր բեմի վրայ են, ոչ պակաս զմուարութիւն կայ նաեւ հաօքարակութեան մտաւոր զարդացման, աստիճանի մէջ, Շէքսպիրը հասկանալու համար բաւական չէ յուզել, երբ Արքայ Լիրը գրկած բերում է իր մեռած աղջկայ դիակը, կամ երբ Համլէտ մեռնում է այնքան տրագիկ պայմաններում, սրանք տեսարաններ են, որոնք կարող են յուզել ամենասովորական մարդկանց անգամ: Շէքսպիրը բեմում արտասանուած իւրաքանչիւր խօօրի մէջն է, իւրաքանչիւր ժեստի, իւրաքանչիւր ծիծաղի ու արդունքի մէջն է, նա այն հանձարաներից է, որոնց շրթունքից ոչ մի բան չի ընկել, որ խօրին կենսական փիլիսոփայութիւնը չը պարունակէր Հասկանում է այդ բոլորը հասարակութիւնը, Շէքսպիրը ծիծաղ ունի, որի համար լալ պէաք է, իսկ անցեալ օրուայ հասարակութիւնը ծիծաղներ ունեցաւ, որի համար ինքը՝ հանձարեւ զեղարուեստագէտը լաց կը լինէր, եթէ լսել կարողանար Այսպիսի հասարակութիւն չի կարող վերապրել մի քանի դարով հեռու օտար և այն խօրին փիլիսոփայութեամբ զեղուն մի կեանք, կարծում ենք, որ առ այժմ Շէքսպիրին կարելի է հանգիստ թողնել:

—

Հօկտեմբերի 7-ին տեղի ունեցաւ պ. Շիրվանզադէի «Աւանքը իրաւունք» նոր դրամայի ներկայացումը Հասարակութեան բաւական խօչոր թիւ այդ օրը ցրել էր Թատրոնը: Մարդիկ եկել էին բեմի վրայ տեսնելու հայ հեղինակի նոր աշխատութիւնը, որ ինչպէս հաւատացնում էին կա: խօրին պատառող

շշուկները չօշափել է մի թէեւ չափազանց հին, բայց միշտ կենաւական հարց՝ ամուսինների յարաբերութիւնը, ընտանիքի հիմնական պրինցիպները, Ըսդհանուր հետաքրքրութիւնը հասկանալի էր, արգելօք այդ հետաքրքրութիւնը գէթ մասամբ բաւականութիւն ստացաւ, Ահա այդ հարցին է, որ մենք կ'աշխատենք պատասխանել պ. Շիրվանզագէի գրամայի մանրամասն վերլուծութեամբ:

Նախ ասենք, որ դրամայի նիւթն աւելի քան պարզ է, Վաճառական Անտոն Բեգմուրեան, իր առաջին երիտասարդութիւնն անցրած մի մարդ, ամուսնանում է Սօղոմոն Սուրաթեանի մանկամարդ աղջկայ՝ Հերսիլիայի հետ: Կեանքի չար ու բարուն դեռ բոլորովին անձանօթ 18 տարեկան Հերսիլիա՛, ինչպէս իմանում ենք իր խոստովանութիւնից, տալիս է իր համաձայնութիւնը մօտ քառասուն տարեկան մարդուն առանց մոտածելու, առանց կշռադատելու իր վճռական քայլը, միմիայն, նրա համար, որ իր մայրը այդ գտնում է լաւ, խորհուրդ է տալիս և Բեգմուրեան նրան սիրում է,

Ամուսնութեան հետեւող վեց տարինների ընթացքում Հերսիլիան իրան կամաց-կամայ գտնում է գերազզի: Բեգմուրեան իր գործով զբաղուող, բարեբարոյ, տուն, ընտանիք, երեխաններ սիրող մարդ է, մեզմ բնաւորութեան տէր, բայց նա իր չար սովորական հասկացողութիւններն ունի կնոջ կոշիքն մասին, նա գտնում է, որ կինը մայր է և տնտեսուհի, ուրիշ ոչինչ: Եւ ահա ամուսնու այս հասկացողութիւններն են դառնում Հերսիլիայի գժբազութեան պատճառը, հեղինակի ասելով՝ խելօք, զարգացած, զեղասէր, հոգեկան լայն պահանջներով մի կին է, որին իր ամուսինը թւում է չափազանց tergere-ձ-terge: Կինը, օրինակ, սիրում է երաժշտութիւն, հաւատացած է, որ ինքը մեծ տաղանդ ունի, և պէտք է որ գնայ կատարելագործուի, գորոշէ մի աշխարհահոչակ տաղանդ է գառնալու, բայց ամուսինն աշխատում է իր պրօգայիկ դատողութիւններով սառը ջուր ածել նրա հոգու տաք թափչների վրայ, աշխատում է նրան կապել իր երեխանների, իր տան, ամուսնական իր անմիջական պարտաւորութիւնների հետ:

Երկու ամուսինների մէջ ծագած այս անհամաձայնութիւնն է, որ աւուր մեծացող այս անտագօնիզմն է, որ հեղինակը վերցրել է իբրև իր դրամայի անջատման կետ: Վրայ է հասնում Ռուբէն Ալիմբարեան, մի շահիլ, գեղեցիկ երիտասարդ, որ Պարիզում ուսել է ճարտարապետութիւն, թափառել է արտասահմանի շատ քաղաքներ, բայց որ չի պարապում իր մասնագիտութեամբ, այլ դիլետանտօրէն:

սիրում է գեղարուեստը, գեղեցիկը և նա արկին Բեգմուրեանի մանկութեան ընկերն է, հին յշողութիւնները վերանորոգուում են, որպէս անհրաժեշտ շաղախ նոր կապերի և նա գեղեցիկ խօսել զիտէ, նա տեսել է շատ կանաք, հասկանում և բացառում է ինոչ գերը Անտոն Բեգմուրեանից բոլորովին տարրեր եղանակով, նա ասում է Հերսիլիային, թէ նա անօդուտ տեղը տանջուող մի դժբաղտ էակ է, թէ նա տաղանգ է, քաջալերում է նրա անորոշ տեսները, հաւատացնում է թէ իր թափառական կեանքի ընթացքում նա այդպիսի կատարելութիւն իրեւու կիս տեսած չէ, և թէ նա արժանի է մի այլ վիճակի, այլ միջավայրի Այս բոլոր ձառերը վերջանում են նրանով, որ Ծուրէնը և Հերսիլիան փոխադարբար սիրահարում են, Բեգմուրեան այդ նկատում է, նա մի լեռնական է, որի արտաքին մեզմութեան, քազզրութեան տակ ծածկուած է մի խիստ բնաւորութիւն բռնկուող զայրոյթ, նրա կացութիւնը զանում է անտանելի, իր խանդոտութեան բռնկումների վայրկեաններին նա նոյն-իսկ ձեռք է բարձրացնում կնոջ վրայ, թէեւ շարունակում է նրան սիրել և իր արածի վրայ իսկոյն փոշմանում, բայց Հերսիլիան էլ իր ընթացքով նրան մղում է դէպի նոյն ծայրայեղութիւնը, աւելի ևւա մեծացնում է իրանց մէջ բացուած վիճը և մի օր իր սիրած երիտասարդի՝ Ծուրէնի հետ փախչում է, թողնելով իր երեխաններին, որոնց նա չի էլ սիրում, ինչպէս ինքն է ասում, որովհետեւ նրանք՝ այդ երեխաններն իր չը սիրած մարդուցն են, Դրամայի այս երեկ գլխաւոր գործողներից գուրս կան նաև, Հերսիլիայի ծնողները Սուրաթեան ամուսինները, որոշ տեսակէտից հետաքրիր դէմքեր, Բեգմուրեանի մտերիմ ազգականը իլիս Մարմարեան մի պարալիտիկ, որ ըստ երեւոյթին ներկայացնում է սառն բանականութիւնը նա էլ համակրում է Հերսիլիային, կայ նաև Ծուրէն Ալիմբարեանի գոյրը, որ բժշկութիւն է սովորել և մտազիր է գնալ Պարսկաստան Շահի կանանցի բժշկունի գառնալու համար,

Դրամայի հիմնական զաղափարը և հեղինակին առաջնորդող բարոյական սկզբունքները պարզելու համար մի փարլ խորը նայենք այս զործողներին Սկսենք գլխաւորից, դրամայի հերոսունուց, որի շուրջն է զառնում ամբողջ զործութիւնը, որ իրեւ կեղրոնական անձնաւորութիւն, անհրաժեշտ օղակ է հանդիսանում պիեսայի զանազան մասերին, և իր ընթացքով տալիս է մեզ կատարուող կենսական երեւոյթների բարոյական փիլիսոփայութիւնը, Խորաքանչիւր վէպի կամ դրամայի մէջ ընթերցողը փնտուում է ամենից առաջ կամ մի երազած ցանկալի գրութիւնից գուրս բերած մի հերոս,

կամ իրականութիւնից վերցրած մի կենդանի տիպ, արդիւնք իշխող երեւոյթների, պայմանների անխուսափելի տրամաբառնութեան, որ ներկայացնուում կամ աւելի ճիշտ մարմնացնուում է իր տառապանքների կամ պայքարի մէջ յայտնի միջավայրին յայտնի հասարակութեան պատկանող բազմաթիւ անյայտների նման յոյզերը, նման իղձերն ու ցաւերը, որ գիտակցական թարգման է հանդիսանում բազմաթիւ կորած մոլորած մարտիկներին, անզօր, կամ տգէտ հոգիների մէջ ապրող անորոշ, բայց տիրող ընդհանուր զգացմունքներին՝ Ներկայ գէպքում հեղինակը կամեցել է տալ մեզ մէկն այն ընաւորութիւններից, որոնք հրապարակ են գալիս որպէս հասարակաց փրկութեան զոհեր, և իրանց ընթացքով, իրանց պայքարով ու տառապանքներով գնում են տիրապետող խեղզող հոսանքի գէմ, և յաղթանակող կամ յաղթուած, տանում են իրանց հետ բիւրաւոր բազդակիցների, մթութեան մէջ լացող հոգիների անհուն սէրն ու երախտագիտութիւնը։ Հեղինակը կամեցել է, այս, բայց նրա փորձը տարաբազտաբար վերջացել է մի կատարեալ անյաջողութեամբ։ Մշակուած, տրամաբանական հիմունքների վրայ կանգնած կենդանի տիպի փոխարէն, պ. Շիրվանզադէն մեզ տուել է հոգերանական մի արսուրա, հերոսունու մի կարրիկատուրա, որ գործում ասում, խօսում է ոչ այն, ինչ պիտի բղխէր որոշ մօմենտի, որոշ իրականութեան մէջ ապրող հոգուց, այլ այն ինչ որ հեղինակը կամենում է, առաջնորդուած որոշ բարոյական հետեւողութիւններ, որոշ մօրալ տալու միալ տրամաբանութեամբ։ Հերսիլիսան կենդանի առողջ բանականութեամբ մի էակ չէ, այլ մի փիկցիա է։

Ամենից առաջ այդ ամուսնութիւնը, որքան արուեստականութիւն, որքան մտածածին և իրականութիւնից խուսափող մի կացութիւն։ Բարեկիրթ, ինելացի աղջիկ գեղասէր, կենսասէր ու գեղեցիկ, որ անծանօթ չէ իր ըրջապատին, որ լաւ գիտէ թէ իրան հետեւում են շատ ջահիլ երիտասարդներ, իր ընտրութեան մէջ ազատ է, հայրը, ինչպէս յետոյ կը տեսնենք դէպի իր աղջիկն ունեցած իր վերաբերմունքի մէջ հասնում է նոյն-իսկ ծայրահեղ ազատամտութեան, մայրը միայն ցանկութիւն է յայտնում Բեգմուրեանին փեսայ տեսնել և այդ «խելացի» «կրթուած» ձաշակով ջահիլ աղջիկը այնուամենայնիւ տալիս է իր ձեռքը մի մօտ քառասուն տարեկան մարդու, առանց նրա բնաւորութիւնն ու հասկացողութիւնները գէթ մի փոքր մօտիկից ձանաշելու ինչու ծրամաբան ու հասկանալի լինէր գուցէ, եթէ պ. Շիրվանզադէն մեզ ասէր, որ այդ աղջիկը պարզապէս գրաւուել է Բեգմուրեանի հարստութեամբ, որով պիտի կարողա-

նայ իր բազմապիսի կապրիզներին բաւականութիւն տալ բայց
ոչ հեղինակի՞ն հարկաւոր է, անհրաժեշտ է, որ Հերսիլիան
իդէալական կին համարուի, նա կարծէք ուզում է ասել հասա-
րակութեան, ահա նաև, իմ երեւկայած կինը, զգուշացնում եմ
ձեզ, որ նա կարող է հակասութիւնների մէջ ընկնել, կարող է
յիմարութիւններ ասել, դատարկ և ունախասէք լինել, կարող է
նոյն-իսկ ծեմի-մոնդ-ի զարգերից մէկը լինել, բայց դուք մի
րոքէ չը մոռանաք, որ նա խելքը, զարգացած, իդէալական կին
է, նման այն անփորձ նկարչին, որ խնձորի ծառէ նկարում
ուռենի է դուրս գալիս, բայց թիւրիմացութեան տեղիք ըստա-
լու համար նկարի ներքեւում գրում է, առա խնձորի ծառ է:

Եւ ինչումն է արտայալաւում պ, Շերվանզաղէի իդէա-
լական կնոջ լայն ձգութեարը, նրա հոգեկան այն ազնիւ պա-
հանջները, որոնք իրանց անօթինակաւթեամբ և նորութեամբ
այնպէս անողորմ կերպով իրը թէ ընդհարուում են իր միջա-
վայրում իշխող հասկացողութիւններին և առաջ են բերում եր-
կու ամուսինների մէջ արագիկալան աւտագօնիզմը Նրանում,
որ Հերսիլիան երաժշտութիւն է սիրում, որ նա ամենաանընա-
կան պայմաններում մի թեթեւսովիկի փութկոտութեամբ սկը-
սում է գնկլամացիա անել լեռներին նայելով և հառաչել բն-
քըն էլ չիմանալով թէ ինչու:

Վեց տարի է ինչ նա ամուսնացել է, արդէն մայր է, զա-
ւակներ ունի, և մեր հերոսուհին գտնոն է իր կացութիւնից
կարծէք նրա համար, որ ամուսինը նրա հետ լեռները չի զնում
չրջելու, որ նա էլ երաժիշտ չի, որ նա էլ լիռներին նայելիս
զեկլամացիաններ չի անում զեղեցիկ մասին, որ նա էլ չի հա-
ռաջում թունի երգը լսելու Գեղեցիկը երան վրայ և երաժը-
տութեան մէջ, այդ զիտէ Հերսիլիան, բայց գեղեցիկը կեանփի
մէջ, անձնուիրութեան մէջ, այս մեր տառապանքներով իի զո-
յութեան խորհուրդ տուող իդէալի իրական պաշտամունքի մէջ,
ցաւած հողինների տանջանքի վիճութեան մէջ, այդ խուսափում
է նրանից, այդ նա չի ճանաչում, այդ նա չի հասկանում, ան-
կարող է հասկանալ: Չը կայ այն կակծեցուցիչ, այն ազիքները
զալարող ներքին պաքարը, որ ընարեալ անհատներին, մարտի-
րոններ է դարձնում, չը կայ կեանփի ազեղութիւնների, մի-
լիսնների ծուած մէջերին ծանրացած չարփի հետ ընդհա-
րուող, նրա հոսանքին զէմ ընթառող այն ուժեղ հողին, որ գա-
լարուում է արտաքին պայմանների ոյմի տակ և որ իր անզօ-
րութեան մէջ անդամ զեղեցիկ է և որի տառապող գլուխը ա-
սես լուսապատկ ունի իր չուրջը:

Սյս բոլորը զեղեցիկ չեն Հերսիլիայի համար, մասսայի

ցաւերը կարող են վիրաւորել նրա էստէտիկական ճաշակը, նա երաժշտութիւն և լեռներ է սիրում և այսպիսի ուժով, որ պատրաստ է ձգել իր տունը, ամուսնուն, երեխաներին, միայն թէ կարողանայ իր դատարկ զեղումները, իր շաղակրատութիւնները դուրս թափել մի իր նման բեղեցնեօրի առաջ, Նա գեղապահ է մինչև այն աստիճան, որ ինչպէս ինքն է ասում, «սիրում է գեղեցկութիւնը մինչև անգամ յանդանքի մէջ»: Անա ձեզ դարձեալ մի ֆրազ, որ ոչինչ չի նշանակում, որ մի տրամաբանական ու բարոյական աբսուրդ է «Գեղեցիկը յանցանքի մէջ», բայց յանցանքն ինքն ըստ ինքեան կեանքի դարձ կողմն է, Նա գեղեցկութիւն չի պարունակում, նա նոյն ինքը տգեղութիւնն է — ինչպէս վնասուել տղեղութեան մէջ գեղեցկութիւնն Այս, կան տիպեր, որոնք հմայք են ճաշակում անգամ արիւնոտ ոճիրների պատկերի առաջ, որոնք երջանկութեամբ հետում են իրանց դանակի տակ զոհի ոսկորների ճարճատիւնը լսելիս, որոնց հաձոյք են զգում իրանց նմանների տանջանքի առաջ, որոնք գերագոյն էքստազի մէջ են ընկնում կեանքի զարչութիւնները տեսնելիս, բայց դրանք բոլորն էլ հիւանդ հոգիներ են, դրանք այլասեռումն են, զրանք կօմքրօզօի գրչին արժանի հետաքրքիր սիւծեաններ են և ոչ հասարակաց մօրալն առաջնորդելու կոչուած անհատներ:

Հերսիլիային բեմի վրայ տեսնելիս ես ակամայ յիշեցի Ֆլուերի «Մադամ Բօվարյ»-ն, որ չնորհիւ իր ստացած վանական դասահարակութեան, շարունակ դժգոհ է մի բանից, շարունակ մի ինչ որ վնասում է ամուսնական կեանքից դուրս և վերջի վերջոյ առաջին պատահած երիտասարդի գիրկն ընկնելուց յետոյ իր միայնութեան ժամկե կրկնում է երջանկութեամբ՝ «Վերջապէս ես էլ սիրական ունիմ»! Դուրս է գալիս, որ նա սիրական էր վնասում ճիշտ այնպէս, ինչպէս կը կամենար մի լաւ մատանի ունենալուց յետոյ, պարանոցին կախել նաև մի լաւ ոսկէ մանեալի Սիրականը նրա համար մի լիւքս է, էրօտիկ զգացմունքներին բաւականութիւն տուող մի զարդ: Բայց Փրանսիացի հեղինակն այդ տապն ստեղծելով չի կամեցել տալ հասարակութեան կատարեալ կնոջ մի պատկեր, ընդհակառակը, Նա ներկայացնում է մեզ ապականած, նեխած միջավայրում առաջ եկած մի հիւանդ բնաւորութիւն, մի տղեղութիւն, պ. Շիրվանզադէն տալիս է մեզ Մադամ Բօվարյ-ի մի ողորմելի կարրիկատուրան, այն էլ իբր օրինակելի տիպ, իբրև «կրթուած, խելացի կին»:

Բարոյական այս գլխիվայր հասկացողութիւնների կողքին հեղինակը թոյլ է տուել նաև մի հոգեբանական կոպիտ սը-

խարը կամենալով ցոյց տալ, թէ մինչև որ աստիճան Հերսիլիան ատում է իր ամուսնուն, նա նրան ասել է տալիս թէ «Ես ատում եմ իմ զաւակներին, որովհետեւ նրանք իրանց հօրն են նմանու Երբ և որտեղ է պատահել այ, ներվանզադէրն մի կին, որ իր զաւակներին ատելիս լինէր իր ամուսնու պատճռով, ծնողական զգացմանը մայրերի մէջ այնքան զօրեզ է, որ նրանք ոչ մի պայմանում դէպի իրանց ամուսինը տածած ատելութիւնը նրանց վրայ տարածել չեն կարող: Ասելի ամուսնութիւնից ազատուելուց յետոյ էլ յայտնի է, թէ կանաչը ինչ միջոցների են զիմում իրանց զաւակներից չը գրկուելու համար, աւելին կ'ասեմ: որքան անզամ առօրեայ կեսնքում հակառակ իր կամքին ամուսնայած կինը շատ անզամ առաջին զաւակը ծնելուց յետոյ, սկսում է եթէ չը սիրել, գոնէ մեղմանալ դէպի ամուսինը, կարծէք դէպի զաւակը տածած սիրոյ ցայտումներն ընկնում են և այն էակի վրայ, որ պատճռն է նրա մայրական երջանկութեան: Ասել թէ կինն ատում է իր զաւակներին, որովհետեւ նրանք նման են իր ատելի ամուսնուն, կը նշանակի բոլորովին ծանօթ չը լինել նրա մայրական զգացմունքի խորութեան:

Փախուստից յետոյ իր ամուսնուն թողած նամակում Հերսիլիան ատում է թէ «Ես չեմ կարող մնալ, որովհետեւ պատկանում եմ նրան և իմ կոչմանը» *), կնոջ կոչումը ներկայումս ամբողջ աշխարհի սօցիալական բարդ խնդիրներից մէկն է, էժմանսիպացիան իր եռանդուն մարտիկներն, ինչպէս և իր կատաղի հակառակորդներն ունի. բազմաթիւ նշանաւոր մուածողներ զրադուել են և զրագում են այդ կնճռոտ խնդրով, որ սերտ առնչութիւն ունի ժամանակակից հասարակական կեանքը յուղող բազմաթիւ այլ խոչոր պրօբլեմների հետ Յամենայն դէպս այդ հարցի մասին երկու նշանաւոր տիրապետող մուածոր հոսանքներ կան, ոմանց համար կինն իբրև ընտանիքի, օջաղի սիւն, մայր է, ամուսին և տնտես, ուրիշների համար նա տղամարդին հաւասար բոլոր իրաւունքներն ունի կեսնքի բոլոր ասպարէ զներում: Մենք նոր և այն էլ հայ բեմի վրայից լսեցինք, որ կնոջ վերաբերեալ կայ և երբորդ մտաւոր հոսանք, այդ այն է: թէ նա պիտի «ապրի» այդ բառի խիստ սահմանափակ, չեմ բաշւում ասել սեռական մաքով: Կինը պիտի «ապրի»՝ սա գեղեցիկ է, իսկ այն երեխաները, որ նրա արգանդի ծնունդ են, չը պիտի ապրեն, նրանց կարելի է շպրտել փողոց: Կինը պիտի ապրի ուրիշների, անզամ իր սեփական զաւակների երջանկու-

*) Պիտի սա լից մէջ բերուած խօսքերը միշտ մօտառրապէս են:

թեան վրայ հաստատելով իր եօսէր, զգայական կեանքի պատուանդանը: Սա էլ գեղեցիկ է, բայց այդ գեղեցկութիւնը ճաշակել, հասկանալ չեն կարող անդամ էմանվիպացիայի ամենատաք, ութիւնածարայեղ պաշտպանները, որոնց համար կանանց հարցի մէջ ամենաեկնձռու կողմերից մէկը և երեխանների ապահովութեան, խնամքի հարցն է: Առնուազն չափազանց միամիտ պիտի լինել այս աստիճանն խոչոր կենսական պրօլեմներին այս աստիճան թեթեւութեամբ մօտենալու համար, ինչպէս առում է ներկայ դրամայի հեղինակը:

Երանի թէ այսպան հեշտ լինէր այդ դաւոտ ինդրի լուծումը: Տարաբարադրար ապագան իր հասարակական կազմով բազմաթիւ սիւրպիզներ է պահում միշտ անգամ մօտաւոր անցեալի համար. թւում է թէ պ. Շիրվանզադէն անգիտանում է տնտեսական-սոցիալական այն բարդ խնդիրները, որոնց չուրջն է գառնում այսօր դասակարգային կատաղի պայքարը, որի այսպէս թէ այնպէս լուծումից է կախուած և կանանց հարցի արմատական լուծումը.

Երկու ամուսինների մէջ այդ իրը թէ իդէալական հողի վրայ առաջ եկած դժգոհութիւնը նկատելով, մարդ սպասում էր տեսնել նրան հետեւող մի դրութիւն, ուր գաղափարական մօտիվների մի բարդ հիւսուածքում հերոսուհին կընդհատուի իրականութեան անողորմ պահանջներին և այսպիսով հնար կը լինի պատճառաբանուած, հիմնաւորուած մի փիլիսոփայական մօրալ գուրս բերել, բայց այդ բոլորի փոխարէն ասպարէզ եկաւ երկրորդ զլխաւոր անձնաւորութիւնը, երիտասարդ Ռուբէն Ալիմբարեան, մի դատարկամիտ եօն vivant, մի լօվելլաս, որ կատարեալ դարձեց պիեսայի անկումը:

Ի՞նչ է ներկայացնում իրանից Ալիմբարեանը, ինչով նա կարողացաւ զրաւել «խելօթ», կրթուած, զարգացած» Հերսիլիայի սիրաբ: Նրանով, որ նա սովորել է ճարտարապետութիւն, բայց իր մասնագիտութեամբ չի զրագում, սիրում է գեղարուեստը, թափառել է եւրապական շատ քաղաքներ, տեսել է շատ կանայք, երեսուն տարեկան է արդէն, բայց կոյս հոգի ունի, խօսում է լաւ, անգիր քրազներ զիտէ կանանց կոշման և նրանց դերի կարեւորութեան մասին: Եւ այսքանը բաւական է, որ Հերսիլիան նետուի նրա զիրկը, որ նրան համարի մի իդէալական անձնաւորութիւն:

Ցանկանում էր պ. Շիրվանզադէն, որ հասարակութիւնն էլ այդ երիտասարդի մէջ մի իդէալական տիպ տեսնէր, եթէ այն, այն ժամանակ նա կարող է հաստատ հաւատացած լինել, որ ամեն մի փոքր իշատ է հասկացող, որոշ բարո-

յական սկզբունք ունեցող անձնաւորութեան համար իր թը-
խած հերոսը միայն նողիկանք կարող է պատճառել որպէս մի
ցինիկ Ռզբալի է այն հասարակութիւնը, ուր Ալիմրարեանի
պէս ախաբեր կարող են հերոսանալ, արտասուելի է այն զրա-
կանութիւնը, ուր նրանք պիտի հանդիսանան իրրեւ կրթիչ
տիպեր Ռւըեմն քաղաքացիական, անհատական, հասարակական
պարտաւորութիւններ չը կան կրթուած երիտասարդի համար,
ուրնմն կարելի է դնալ, թափառել եւրոպական քաղաքներ, վե-
րադառնալ մտնել հայ նահապետական ընտանիքների մէջ և այն-
տեղ գեղեցիկ տիկիններին ճառեր ասել, հառաչել, ցինիկաբար
սեփական կուսութիւնից խօսել և ամենացած վայելքների, արա-
փանքի, աղտեղութեան մէջ հերոսանալ ի՞նչ փոյթ, որ կեանքը,
մեր զառն, արտասուելի իրականութիւնը բազմաթիւ կնճռոտ
խնդիրներ է հանել մեր առաջ, ինչ փոյթ, որ թշուասութեան,
տգիտութեան, խնդութեան ճիրաններում թրապում են այն-
քան թշուառներ, ինչ փոյթ արցունքն ու հառաջանքը, որ առ-
մեն օր թափուում և լսուում է մեր շուրջը, Ալիմրարեանը գե-
ղեցիկն է սիրում, Ալիմրարեանը «ապրել է» ուզում, ուստի
նա ազատ է ամեն պարտաւորութիւններից և նա... հերոս է,
մենք նրան հիացմունք, ոքանչացումն ենք պարտական

Հերսիլիան տիսուր է, որ չի կարողացել բարձրագոյն
կրթութիւն ստանալ, որով, ով գիտէ, թէ ի՞նչ հրաշքներ պիտի
գործէր, բայց հեղինակը մնդ տուել է բարձրագոյն կրթութիւն
ստացած մի հայ օրիորդի նմուշ՝ օրիորդ Ալիմրարեան նա
քժշկութիւն է սովորել, նա պատրաստուել է հասարակական
գործունէութիւն սկսել, և նա ընտրել է... Շահի հարեմը, Մենք
գիտենք, որ եւրոպացի օրիորդներ կան, որոնք իրանց երկ-
րում տեղ չը գտնենով՝ մասամբ էլ արկածախնդիր և զօրել ցըն-
ցումների հետամուտ բնաւորութիւնից մղուած գուում են հե-
ռաւոր արեւելք, հազար ու մէկ զիշերները երազելու մի իշ-
խանի պալտում կամ պարզապէս զրամ վաստակելու իրեւ
քժշկուհի կամ դաստիարակչուհի Բայց միթէ ձմարիտ մեզա-
նում էլ հայ կրթուած կնոջ համար ուրիշ ասպարէզ չը կայ,
բայց եթէ Շահի հարեմը Ռուսովից և վերցրել պ. Շիրվան-
զադէն այս տարօրինակ նմուշները, և արժէր միթէ մի բար-
ձրագոյն կրթութիւն, ստացած հայ օրիորդ ներկայացնել բեմի
վրայ նրան Պարսկաստանի մի հարեմն առաջնորդելու համար

Սիւրպիկները սակայն սրանով չեն վկրչանում, ահա և
Հերսիլիայի հայրը՝ Սուրաթեան, յիսաւնին մօտ մի մարդ, որ
բացականչում է, թէ իր աղջիկն իրաւունք ունի իր ընթացքի
մէջ, թէ նա պիտի ապրի, թէ նա ազատ է իր վայելքների, իր

զգայական խենթութիւնների մէջ։ Անշուշտ, հեղինակն այսքան միամիտ չի լինի պնդելու, թէ մի հաստ այդպիսի մարդ կարող է ցոյց տալ ամբողջ հայ ժողովրդի մէջ, այդ տիպը նրա ստեղծածն է, ճաշակի բան է, որի առաջ մեզ կը մնայ լոել։

Դրամայի մնացած երկրորդական անձնաւորութիւնների մասին կարելի է և չը խօսելու Ընդհանրապէս կարելի է ասել, որ հեղինակի հիմնական գաղափարը, նրան առաջնորդող սկզբունքը մնաց օդի մէջ կախուած, առանց իրականութեան վրայ հող գտնելու։

Եւ ճշմարիտ, եթէ նիւթը վերցրած է մեր կեանքից, հայ միջավայրից, ապա պիտի զարմանալ հեղինակի այս ծայրայեղ և դատապարտելի անձանօթութեան վրայ, որովհետեւ նրա երեակայած, արուեստական ձեւով յերիւրած տիպերը ոչ մի առընչութիւն չունին հայ կեանքի հետ, նրանց հայ անունները հեղինութիւն են միայն։ Գուցէ նա կամեցել է տալ հայ հասարակութեանը նրա միջավայրից անկախ մի իդէալական, ցանկալի դրութեան պատկեր, որին պիտի ձգտել, որի համար պիտի պքնել, այդ գէպքում նրա փորձը մի տիսուր գրական կատաստրօֆ է միայն, որովհետեւ այդ պիեսայի մէջ, ինչպէս տեսանք, մոռացութեան են մատնուած բարոյական ամենատարբական հասկացողութիւնները մարդկային պարտաւորութիւնների մասին, մարդկային հոգին իր արամաբանական արտայայտութիւնների մէջ ցաւալի կերպով խեղաթիւրուած է, գործող անձինք մի մի մանեքեններ, մի մի մեքենաներ են, որոնք ոչինչ չեն ասում ոչ զլիսին և ոչ սրտին։

Դերասանները կատարեցին իրանց պարտքը բարեխղճութեամբ, բայց նրանց բոլոր տաղանդն ու ջանքերն անկարող ևղան կենդանութիւն տալ մի դիակի, պ. Շիրվանզադէի պիեսան մի մեռած ծնունդ է։

Հոկտեմբերի 18-ին ներկայացուած Օստրովսկու «Անմեղ մեղաւորները» այն պիեսաներից մէկն է, որի մասին կարելի է ասել տիպեր ունի, բայց գործողութեան ամբողջութիւն և տեխնիկա չունի, եւ այդ յաջող ընարած և տաղանդաւոր կերպով պատկերացրած տիպերը իբրև գործող անձինք իրար հետ շատ քիչ կապ ունին, նրանց յարաբերութիւնները, նրանց ընդհարումները իիստ արուեստական են, իրերի բնական ընթացքի արամաբանութիւնը իմիստ թոյլ է, թւում է, թէ սկզբից մինչև վերջը գործող անձինք պատահաբար, դիպուածով են երես առ

երես գալիս, կամ աւելի նիշտ հեղինակը զօրով է նրանց հրապարակ բերում, որ այս կամ այն բանն ասեն, այս կամ այն բանն անեն:

Նայեցէք այս Նեղամովին, այս ապօրինի զաւակին, բաղդի և հասարակութեան խորթ որդուն, որ մանկութիւնից սկըսեալ տառապում է հասարակական անարդարութիւնից, որ հալածում է ամեն կողմից իրեւ ապօրինի ճնունդ, որի գըլիին ճնած օրից ծանրանում է ընթացիկ բարոյականութեան ողորմելի լոգիկան եւ այդ մենակ, աղքատ ու պատառառած, հալածականը, որ իր կացութեան բոլոր գիտակցութիւնն ունի, արհամարհում է հզօրներին, արհամարհում է ամրող հասարակական կազմը և վեհօրէն հրաժարում է զթութիւն մուրալ, նա մի ըմբոստ է, և հապրոտ է իր ըմբոսառութեամբ:

Այս միւսը, այս օղորմելի Շմազան, այս գզզուած, զըռներում ապրող թափառական զերասանը, որ կեանքի պայքարի մէջ ունի միայն իր հիւմորը և խորամանկութիւնը, փոքրիկ խորամանկութիւն, որ հազիւ հար է տալիս նրան երբեմ կերակրուել, ինչպէս ասում է ժողովուրդը իր կեանքի ընթացքում մի քանի անգամ «Ճեռքը կուշտ փորի վրայ զնել», Հրաշալի մի տիպ է այն, հասարակական ստորին խաւարում սողացող ողորմելի այն մութ գոյութիւններից մէկը, որոնք իրանց շահատակութիւնների, խաւար արարքների մէջ անգամ երբէք գարշելի չեն, միշտ արգահետելի, որոնք իրանց կեանքի ամենայետին մանրամանութեան մէջ անգամ՝ դէմ առ դէմ են հանում աշխարհի հզօրների և խնդերի յարաբերութեան բոլոր անարդարութիւնը:

Այս պիեսայի տրիօն կազմող երրորդ անձնաւորութիւնը՝ Լիւրօվը, աղքատ ու ազնիւ աղջիկը, լքուած մի անսիրտ եւ րիտասարդից, կեանքի անթիւ դրամաների անմիզ զոհերից մէկը, որչափ բեալականութիւն, որքան կիզիչ ցաւ կայ նրա կըրած յուսախարութեան, նրա կրած տանջանքների մէջ:

Սրանք բոլորն էլ տիպեր են, և լաւ մտածուած տիպեր, ափսոս, որ հեղինակը տեղ-տեղ մելօդրամայի ձև է տուել իր այգան իրական, այգան յուզիչ խնդիրներ չօշափող պիեսային և տեխնիկական բազմաթիւ անյարմարութիւններ ըստեղծել դերակատարների համար:

Պ. Արէլեան առանց այն էլ բեմի վրայ լայնարձակ շարժումներ, բնական, չը ճնշուած ժեստեր ունի, այս անգամ իրեւ կեանքի գարշութիւնների, նրա ախտեղի կողմերի դէմ բողոքող, իրրե մի յամառ, անըսկնելի, ըմբոստ իրաք տւելի զե-

զեցիկ էր քան երբէք, նրա իւրաքանչիւր շարժումը, իւրաքանչ չիւր մօմենախն բռնած գիրը մի կենդանի հպարտութիւն, մի պատկերաւոր բողոք էր:

Առաջին անդամ տեսայ պ. Արաքսեանին բեմի վրայ և այն Շմագայի վերին աստիճանի դժուար զերումն եւ կուզեմ՝ նրան էլլ տեսնել, շարունակ տեսնել այս աստիճան համապատասխան դերումն Կօմիկի, մի քիչ խեղկատակի դերում ամեն մի դերասանի համար ամենալվանգաւոր թակարդը չափազանցութիւնն է, որի մէջ շատ հեշտութեամբ կարելի է ընկնել: Օզորմելի Շմագայի փափուկ դերը նա ինչ հմտութեամբ տարաւ, ներքնայարկերի, աֆան ճաշարանների, ուրախ, անհոգ կեանքի փիլիսօփայութիւնն իր հմուտ բացարողն ունեցաւ այդ օրը: Պ. Արաքսեան մի չնորհալի դերասանն է, զրաւիչ խաղով:

Օրիորդ Ֆէլեկեան (Վարդիթեր) Լիւրօվ—Կրուչինալի դերը կարողացաւ գոհացուցիչ կերպով տանել: Այդ դերը խոկապէս դժուար է ոչ միայն այն պատճառով, որ հոգեբանական բարդութիւններ, բազմապիսի ու նուրբ յոյզեր է պարունակում, այլ որովհետեւ շատ տեղ խիստ արուեստական է և դերակատարին գնում է տեխնիկակալիան անյարմարութիւնների մէջ:

Պ. Պետրոսեան հարուստ ու բարեմիտ կալուածատէր Մուրօվի երկրորդական դերը կատարեց իրան յատուկ մշտական յաջողութեամբ:

Այս ցանկը չերկարացնելու համար ասենք, որ միւս դերակատարները բարեխզծօրէն կատարեցին իրանց պարագը:

Մի փոքրիկ հասարակութեան փոքրիկ թատերական խմբից շատ պահանջող չը պիտի լինել, այդ հասկանալի է, բայց մի բան, որի համար ոչ մի զիջողութիւն տեղի ունենալ չի կարող, դա բեմական լեզուի ինսդիրն է: Բոլոր քաղաքակիրթ երկրներում մարդիկ թատրոն են գնում մաքուր, անխառն մայրենի բարբառը լսելու և բեմը մի անփոխարինելի զօրավիզ է լեզուի հարըստութիւնները, կիրթ ձեւերը, սիրուն, ականջին հաճելի հաշիւնները երեւան հանելու համար, ծաւալի է, որ մեր բեմի մասին այդ տակաւին ասել չի կարելի. թէ թարգմանութիւնների անյաջող լեզուն և թէ մի քանի դերասանների խորթ արտասանութիւնը խոչընդուռ են հանդիսանում այդ բանին: Մի կոշտ անհարազատ հնչիւն, մի սխալ ֆրազայ, մի ծիծաղելի դարձուածք որ և է պատետիկ վայրկեանում բաւական է ամբողջ տպաւորութիւնը փչացնելու համար: Հաւատացած հնք սական, որ հայ դերասանները, որոնք այնքան դժուարութիւն-

Ների յաղթում են՝ կը խռոսափեն այդ թերութիւնից և մեզ կը տան վերջապէս բեմից մաքուր հայերէն նրանց միայն խրա-խուսել է պէտք, նիւթական և բարոյական խրախուսանքը Հարկաւոր է բեմը գնել հաստատ հիմքերի վրայ, նրան ազատել անախորժ պատահականութիւններից, հարկաւոր է աջակցել լայն կերպով այն մի բռւռն անձանց, որոնք ամեն ինչ անում են այդ օգտակար գործ վարելու համար, իսկ ինչ է անում հայ հասարակութեան ունեւոր այն մասը, որ իրան կրթուած, առաջաւոր համարելու յաւակնութիւնն ունի. Այդ հարցի պատասխանը ամեն ներկայացման ժամանակ մնաք գտնում ենք այն դատարկ օթեականների մէջ, որոնք սպասում են հանդիսա-տեսի, բայց իրանք են դաշնում դիտողութեան և տիսուր խօր-հրդածութիւնների նիւթ.

U.